Ռաֆֆի

Հարեմ

1 - ԺԶ, ԺԷ

Չնայելով այն խորին ատելությանը, որ ուներ Բագիմ-խանումը դեպի յուր բռնակալը, այսուամենայնիվ, երբ նրա գալուստը տեսավ, ընդունեց խիստ ուրախ և հրապուրիչ կերպարանք: Թեև այդ ուրախությունը բոլորովին ակամա և հրապույրը ստիպողական էր, բայց դարձյալ գրավիչ և ախորժելի էր: Նա դիմեց մինչև նախասենյակը, երբ ամուսինն ոտքը դրեց նրա շեմքի վրա, բռնեց նրա ձեռքից և գրկելով բերավ յուր օթյակը:

Այն խոսքերը, որոնցով տիկինն արտասանում էր յուր սերը և ուրախությունը, կարող է արտասանել մի կեղծավոր լեզու, որ երկար ժամանակ եղել է թարգման ճնշված, հաղթահարված և մինչև ստրկության հասած սրտի...

Մտնելով յուր հարեմի սենյակը, իշխանն յուր սովորական հպարտությամբ գնաց, նստեց յուր համար հատուկ պատրաստած փափուկ օթոցի վրա և մեջքը տվեց թանկագին բարձերին: Կինը նստեց նրա մոտ և նազելով թեքվեց դեպի նա, յուր հինայով ներկած ձեռքը դրեց ամուսնի ափի մեջ:

Ի՞նչպես է քո առողջությունը, հարցրուց իշխանը, ծանրությամբ:

Ձեր շնորհը աղախնիդ համար կյանք է, ձեր ամեն մի ժպիտը նրան հավիտյան անմահություն կբախշե, պատասխանեց կինն ասիական գեղեցկախոսությամբ:

Այդ պատճառով էլ ես քեզ մոտ եկա:

Ձեր գալուստն այնքան բերկրալի է, որպես ամառնային անձրևն յուր մարգարիտները սփռում է ծարաված երկրի վրա...:

Մի՞թե դու այդքան սիրում ես ինձ:

Թո՛ղ վկա լինեն երկնքի հրեշտակները, որ ոչ մի ծաղիկ յուր գեղեցկությամբ իմ աչքը չէ գրավում, երբ «սիրականիս» դեմքը չէ այն, և ոչ մի թռչուն յուր երգերով ինձ չէ ուրախացնում, երբ «սիրականիս» ձայնը չէ այն:

Գուցե Բագիմ-խանումի խոսքը մի այլ «սիրականի» մասին էր, բայց իշխանը, բոլորովին իրան վերաբերելով, ասաց.

Միթե սերն այդքան քաղցր է քեզ համար:

Ավելի քան «կենդանության ջուրը»:

Սույն միջոցին իշխանը թևքը փաթաթեց տիկնոջ պարանոցով և նրա շրթունքը սեղմվեցան յուր գեղեցիկ հարեմի թշի վրա:

Դու ավելի անուշահոտ ես, քան թե ջեննաթի վարդերը, կոչեց իշխանն յուր հրապուրանքի քաղցրության մեջ:

Վարդն ավելի զվարթանում է, երբ վաղորդյան ցողը փայլում է նրա թերթերի վրա... այդ քո սերն է, թանկագին ամուսին, պատասխանեց տիկինը:

Մի քանի այդպիսի խոսակցություններից հետո Բագիմ-խանումը վեր կացավ, յուր ձեռքով պատրաստեց մի ղեյլան և մատուց ամուսնուն: Ղեյլանի ծխաքարշը բոլորը զարդարած էր գույնզգույն ծաղիկներով:

Իշխանը սկսեց ծխել: Ֆերուզը ներս մտավ և վայր թողեց օթյակի վարագույրները: Քանի րոպեից հետո խավարը ծածկեց յուր պարկեշտ թևքերի տակ հարեմական իշխանի բոլոր սիրակցությունը...

Բայց Զեյրան-խանումը, դուրս գալով Բագիմ-խանումի սենյակից, նրան հանդիպեց Խուրշիդ-խանումը, որի մասին կես ժամ առաջ խոսում էին երկու

տիկինները: Խուրշիդը, կատաղած առյուծի նման, միայնակ ման էր գաչիս հարեմխանայի բակումը:

Զեյրան, Զեյրան, կանչեց նա հեռվից:

Զեյրանը կանգնեց: Նա մոտ եկավ:

Իմամ-Հուսեյնի գերեզմանին երդում լինի, ասաց նա բարկացկոտ ձայնով, եթե առավոտյան ես Բագիմի ծամերը մեկ-մեկ դուրս չքաշեմ...

Ինչո՞ւ: Գժվե՞լ ես, հարցրուց Զեյրանը զարմանալով:

Նա համարձակվո՞ւմ է իմ հերթը խլել:

Ի՞նչ հերթ:

Իշխանն այս գիշեր ինձ մոտ պիտի լինե՞ր, թե նրա մոտ:

Թող քեզ մոտ լիներ, պատասխանեց Զեյրանը սառնությամբ: Բագիմը խո զոռով յուր մոտ չէ՛ տարել:

Խուրշիդն ավելի կատաղեցավ:

Զոռով չէ՛, բա ի՞նչ է: Նա չէ՞ր իմանում, որ հերթն իմն է:

Նա ինչո՞վ իմանար: Նա էյլմ-ղեյբի չգիտե, հեգնորեն ասաց Զեյրանը:

Ես նրան կհասկացնեմ, թող առավոտը լուսանա...: Ես այն թուրքմենի քածին ցույց կտամ...

Գնա՛, գնա՛, դու կռիվ ես պտրում, ասաց Զեյրանը հանդիմանական կերպով: Եթե նա թուրքմեն է, դու էլ մութրուֆ (ցիգան) ես... մի շատ ազնիվ ցեղից չես...

Բոշա Հարեմի աչքերը վառվեցան բարկության կրակով: Դու՛, անզգամ, պաշտպանո՞ւմ ես այն անառակին, կոչեց նա հարձակվելով Զեյրանի վրա:

Անզգամն էլ, անառակն էլ դու ես...: Ե՞ս... ճչաց Խուրշիդը և երկու ձեռքով ձիգ ընկավ Զեյրանի ծամերից:

Վա՛յ... վա՛յ... ձայն արձակեց Զեյրանը և ինքն էլ փոխադարձաբար բռնեց Խուրշիդի ծամերից:

Երկար նրանք մեկ-մեկու քարշ էին տալիս, միմյանց աչքն ու երեսը ծվատում էին, երբ վրա հասավ ներքինապետը:

Ամոթ է... խանումներ, այդ ի՞նչ խաբար է... ասաց նա նրանց բաժանելով:

Թող դրան խեղդեմ... ասում էր Խուրշիդը, աշխատելով Հեյդարի ձեռքից դուրս պրծնել:

Բայց Զեյրանն այլևս ուշադրություն չդարձրեց և խույս տվեց կռվի դաշտիցը:

ԺԷ

Մինչ ամրոցում անց էին կենում նախընթաց դեպքերը, Զեյնաբ-խանումը և Քերիմ-բեկը, Սալոմեի տան մեջ, նստած միմյանց մոտ, իրենց սրտի գեղազվարճ բերկրության մեջ, ճաշակում էին սիրո քաղցրությունները...

Սալոմեն նրանց մոտ չէր, նա մյուս սենյակում յուր ամուսնու հիվանդ ընկերի վերքերին սպեղանիք էր դնում:

Լսի՛ր, Ալմաստ, հառաջ տարավ Քերիմ-բեկը ընդհատված խոսակցությունը, մեր գերությունից հետո մեր հայրենիքում պատահել են մեծամեծ փոփոխություններ: Վրաստանը վաղուց միացել է Ռուսաստանի հետ: Այժմ վրացիք թագավորություն չունեն: Հիմա մեր Թիֆլիսը ռուսաց քաղաք է: Ռուսներն ուզում են տիրել բոլոր Կավկազին, այժմ այնտեղ պատերազմ կա:

Պատերա՛զմ... կրկնեց սարսափելով. Ալմաստը: Էլի կոտորո՛ւմ են...: Այդ դու ո՞րտեղից գիտես, Մեխակ:

Այսօր վաղ առավոտյան Նաիբ-ուլ-Սալթանեի սուրհանդակը Թավրիզից այստեղ հասավ: Նա եկել էր չորս օրում և բոլոր Պարսկաստանի համար բերել էր տխուր լուրեր: Ռուսները հաղթում են և տիրում են պարսից խանություններին: Բոլոր հայերն ոտքի են կանգնած, ուզում են ազատվիլ պարսից լծից:

Դեռ գտնվելով պատերազմական սարսափելի տպավորությունների տակ, Ալմաստը, լսելով այդ խոսքերը, բոլոր մարմնով դողում էր: Նա հարցրուց անհամբերությամբ. Ռուսներն ո՞վքեր են: Ա՛խ, ով գիտե նրանք էլ Մահմեդ խանի նման թալանում են... գերի են տանում...

Չէ՛, Ալմաստ, հանգստացրուց նրան Քերիմ-բեկը, ռուսները մեզ նման քրիստոնյաներ են, նրանք գերի չեն առնում և պարսիկների նման չեն թալանում...

Նրանք մեր խաչը և պատկերները պաշտո՞ւմ են:

Պաշտում են:

Ալմաստը մի փոքր սիրտ առավ, հանգստացավ:

Ամբողջ Թեհրանն այսօր խռովության մեջ է, շարունակեց Քերիմ-բեկը, շահը հրամայել է բոլոր զորապետներին հավաքել յուրյանց դոշունը: Մեծ Մուշտեիդն առավոտյան դուրս եկավ մեչիդից քաղաքի հրապարակը, քարոզեց ջրհաթ անել իրանց կրոնակիցներին օգնելու համար:

Այդ լավ չելավ մեզ համար... ասաց Ալմաստը հուսահատ կերպով:

Դու չես հասկանում, Ալմաստ, շատ լավ էլավ:

Ի՞նչպես:

Որպես քո ամուսին իշխանը, նույնպես իմ տերը Սեր-Ասքերը՝ երկուսն էլ մեծ զորապետներ են, նրանց հրամայված է գնալ պատերազմ: Մենք երկուսս էլ ազատված կլինենք:

Ո՞րպես:

Այնպես որ, եթե մենք թողնենք այդ քաղաքը և հեռանանք այստեղից, էլ նրանք չեն կարող մեր ետևից ընկնել:

Ինչո՞ւ:

Նրա համար, որ նրանք զբաղված կլինեն յուրյանց պատերազմական գործերով: Նրանք այստեղ չեն լինի:

Ալմաստի հուսահատ դեմքը զվարթացավ ուրախության լուսով, և նա հարցրուց անհամբերությամբ.

Բա՛, ինչո՞ւ ենք ուշանում:

Գնանք, Ալմաստ, չուշանանք, ամեն մի րոպեն թանկ է մեզ համար, խոսեց Քերիմ-բեկն ոգևորված կերպով: Գնա՛նք, մեր վրեժն առնենք այն ազգից, որոնք թափեցին մեր հոր, մեր մոր ու մեր ազգականների արյունը...

Եվ այդքան տանջեցին մեզ... հարեց Ալմաստը:

Սույն միջոցին երիտասարդի դեմքն ընդունեց խիստ վշտահար արտահայտություն, և նա, խորին կերպով հոգոց հանելով, ասաց.

Այո՛, տանջեցին... իմ սիրեկան: Արդեն տասն տարի է այս քաղաքումս ես լսում եմ պարսիկը հայի հավատքը հայհոյելիս և լռում եմ...: Ես տեսնում եմ պարսիկը հայի գլխին ծեծելիս, աչքերս խփում եմ և անց եմ կենում...: Միրտս կրակ է կտրում, աչքերիցս արտասուքը վազում է... բայց ոչինչ չեմ կարողանում անել... որովհետև այստեղ թե լեզուս և թե ձեռքս՝ երկուսն էլ կապված են...

Ալմաստը լսում էր վերջին խոսքերը բոլորովին համակրությամբ: Ինձ հետ էլ միշտ միևնույնն է պատահել, Մեխակ ջան, տիկինն ընդմիջեց նրա խոսքը, թեև ես մինչև այսօր ձևացրել եմ ինձ որպես ճշմարիտ մահմեդական, բայց դարձյալ երբ իշխանը կբարկանար ինձ վրա, իսկույն կսկսեր խաչին հայհոյել:

Այդպես են վարվում այդ բարբարոսները հայերի հետ, պատասխանեց Քերիմ-բեկը կրկին ախ քաշելով: Անցյալ օր հայերի թաղովն անցա, մի քանի

պարսիկներ ցերեկով մտել էին մի գինեվաճառ հայի տուն խմելու համար: Այնտեղ միայն գտնում են մի մանկահասակ հարս, որը, պարսիկներին տեսնելով, փախչում է դրացու տունը: Գազանները, տեսնելով մի ութը տարեկան աղջիկ, որ քնած է լինում սենյակումը, անմեղ կուսին անգթությամբ բռնաբարում են... և նա սրտապատառ է լինում ու մեռնում է: Ես տեսա նրա անբախտ հորը, որ դստեր անպատված դիակը դրել էր մեծ վեզիրի դռանը և արդարություն էր խնդրում: Պարսիկները անցնում էին, նայում էին անմեղ զոհի վրա և ծիծաղում էին...

Խե՜ղճ աղջիկ... հառաչեց Ալմաստը և նրա աչքերը թաց ելան արտասուքով:

Ա՜խ, այնքան շա՛տ է այդ ազգի կրակն իմ սրտի մեջ, հառաջ տարավ երիտասարդը ցավալի ձայնով, որ հազարավոր պարսիկների արյունով դարձյալ չեմ կարող մարել նրան...: Ես դեռ չեմ պատմել քեզ, սիրելի Ալմաստ, թե ինչպես գերի արեցին ինձ: Առավոտյան ժամն էր: Հայրս մի սայլ էր վարձել, ուզում էր մեզ փախցնել Կախեթ: Մին էլ տեսանք պարսիկները թափվեցան մեր տունը: Հայրս նրանց աղաչեց, թե «ինչ որ ունեմ, չունեմ ձեզ ըլի, տարեք, բայց երեխերքիս ձեռը մի տաք»: Նրանք մեր տունը թալանելուց հետո, ուզում էին տանել ինձ ու իմ քույր Նինոյին: Դու հիշո՞ւմ ես, Ալմաստ, ի՛նչ սիրուն աղջիկ էր նա: Մայրս մեր երկուսին խստել էր յուր գրկում, չէր կամենում բաց թողնել: Հայրս աղաչում էր, պաղատում էր, որ մեզ չտանեն: Նրանք չեն լսում: Երբ տեսավ ուրիշ ճար չկա, հայրս առավ խենջարը: «Քանի կենդանի եմ, ասաց նա, երեխերքս ձեզ չեմ տա»: Դու գիտես, Ալմաստ, հայրս քաջ մարդ էր: Էրեկլե պարոնը շատ էր սիրում նրան: Նա պարոնի առաջին որսորդն էր: Պարսիկների սուրերը փայլեցին: Հայրս կռվում էր ինչպես մի առյուծ, որի բունից խլում են ձագերը...: Պարսիկներից երեքն ընկած էին, երբ հայրս տասը տեղից վերք ստանալով թուլացավ...: Ա՜խ, ի՛նչ բան է սիրելի հոր և մոր սիրտը...: Դու գիտես, Ալմաստ, թե ո՛րքան փափկասիրտ և բարի կին էր իմ մայրը: Բայց այն սարսափելի րոպեին, երբ նրա աչքի առջև ընկած էր յուր տղամարդի արյունով ներկված դիակը, նրա սիրտը կարծես երկաթի պնդություն էր ստացել: Կատաղած առյուծի նման, նա երկար կռվում էր պարսիկների հետ և յուր թևքերի տակից չէր ուզում բաց թողնել յուր զավակները... մինչև խենջարը ցցվեցավ նրա սրտում, աչքերը փակեց և մեզ խլեցին մայրական գրկից...

Տխրության ամպերը կուտակվեցավ Քերիմ-բեկի վշտահար դեմքի վրա, արտասուքը խեղդեց նրան և ձայնը սկսեց դողալ: նա ընդհատեց յուր պատմությունը: Ալմաստը բոլոր ժամանակը լաց էր լինում:

Երբ երիտասարդը մի փոքր հանգստացավ յուր ցավալի վրդովմունքից, շարունակեց.

Այդ դեռ բոլորը չէ, սիրելի Ալմաստ, քրոջս վրա կռիվ եղավ, երկու զինվորներից ամեն մինն ուզում էր նրան ինքը վեր առնել: Մինը, որ աստիճանով ավելի մեծ էր, գործ դրեց յուր բռնությունը և խլեց մյուսի ձեռքից: Բայց այդ վերջինը կատաղած գազանի նման քաշեց սուրը և խրեց քրոջս կողքը... «Թո՛ղ մեռնի՛ այդ գեղեցիկ աղջիկը, ոչ իմը լինի և ոչ քոնը»... ասաց նա դիվական հրճվանքով:

Եվ նա մեռա՞վ... կոչեց Ալմաստը սոսկալով:

Մեռա՛վ... սիրելի Ալմաստ:

Խե՛ղճ Նինո, ես կարծում էի թե նա Թիֆլիսումն է մնացել: Բայց ի՞նչպես ընկար դու Սեր-Ասքերի ձեռքը, հարցրուց Ալմաստը արտասուքը սրբելով:

Երբ ղոշունը Թիֆլիսից դուրս եկավ, բաժանվեցավ զանազան գունդերի: Ես գերի էի մի ծեր զինվորի, որ գտնվում էր Սեր-Ասքերի մոտ մնացած զորախումբի մեջ: Դու չգիտես, Ալմաստ ջան, թե ի՛նչ մարդկանցից կազմված էր Աղա-Մահմադխանի ղոշունի մեծ մասը: Պարսկաստանի ամեն կողմերից բախտախնդիր ավազակներ հավաքվել էին նրա մոտ: Առանց ռռճիկի և առանց թոշակի նրանք հույս էին դրել միայն կողոպուտների վրա: Ճանապարհին նրանք ուտելու հաց անգամ չունեին, հարձակվում էին հանդիպած հայաբնակ գյուղերի վրա և ինչ որ գտնում էին, բոլորը թալանում էին: Այդպես նրանք մտան Պարսկաստան: Այնուհետև, Աղա-Մահմադ-խանը հրամայեց, որ պարսից գյուղորայքին չդիպչեն: Բայց մինչև Թեհրան հասնելը դեռ երկար ճանապարհ կար: Զինվորները սկսեցին վաճառել իրանց կողոպուտը և գերիները: Մի հատ ոչխարն ավելի բարձր գին ուներ, քան թե մի վրացի կամ հայի աղջիկը: Նրանք ծախում էին պարսիկներին, այնպես որ, մինչև Թեհրան հասնելը գերիների կեսը չմնաց: Իմ գերեվար զինվորը սպառեց յուր իրեղենները, միակ վաճառքի

ապրանքը մնացել էի ես: Բայց նա չէր ուզում ինձանից զրկվել, զավակ չուներ: «Քեզ կթուրքացնեմ, ինձ որդի կշինեմ, ասում էր նա»: Մի օր նա գնաց Սեր-Ասքերի մոտ, «ուտելու հաց չունեմ, ասաց, ավանակս, մինչև անգամ հրացանս ծախեցի, մնում է գերիս»: Սեր-Ասքերի աչքին դյուր եկա ես, նա տվեց զինվորին տասը կրան և գնեց ինձ:

Տասը կրա՞ն... կրկնեց Ալմաստը և նրա տխուր աչքերը շողացին աղոտափայլ լուսով: